

398  
U-94

Արարածների  
Գեղարվեստը






ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆ ՊԼԱՍՏԻԼԻՆԵ ՀԵՐՈՍՆԵՐԸ

# Արդամահանյան Գեթիաթևեր

Տիկնիկների և դեկորների ծեփակերտումը՝ ԼԵՎՈՆ ԱՐԲԱՀԱՄՅԱՆԻ



ԶԱՆԳԱԿ  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ





ՀՏԴ 398.21  
ԳՄԴ 82.3  
Ա 942

Ա 942 Արտասահմանյան հեքիաթներ/. — Եր.: «Զանգակ» հրատ., 2013. — 60 էջ:

Գրքում ընդգրկված գերմանական, չինական, պարսկական հեքիաթներից յուրաքանչյուրը կզարգացնի երեխաների երևակայությունը և նրանց մեջ մեծ սեր կարթնացնի գրքի և գրականության հանդեպ:

Հեքիաթների հերոսներն իրականում կերտված են գունագեղ պլաստիլինից: Բացի արկածային ստեղծագործությունների ընթերցումից՝ երեխաները կարող են ինքնուրույն կերտել հերոսներին՝ բացահայտելով արվեստագետի իրենց ունակությունները:

ISBN 978-9939-68-096-5

ՀՏԴ 398.21  
ԳՄԴ 82.3

Ս2036

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
«ՄԻՒԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՑԻ»  
Կրթական Համալիր  
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԳՆԱԲԱՆ

© «Զանգակ-97» ՍՊԸ, 2013



Ն-94

# Արքայապատիվի հեքիաթներ



Գերմանական հեքիաթ

ՀՍԿԱՆ, ՈՐ ԳԱԶԱՐ  
ԷՐ ՀԱՇՎՈՒՄ

Չինական հեքիաթ

ՊԵԿԻՆԻ  
ՎԻՇԱՊՆԵՐԸ

Պարսկական հեքիաթ

ԱՄԱԼՆ ՈՒ ԶԻՆԸ




ԶԱՆԳԱԿ  
ՀՐԱՏԱՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ



# ՀՍԿԱՆ, ՈՐ ԳԱԶԱՐ ԷՐ ՀԱՇՎՈՒՄ

Ժուկով-ժամանակով լեռան լանջին մի հսկա  
էր ապրում: Հսկան շատ քնկոտ էր. հենց քուն էր  
մտնում, հարյուրավոր տարիներ





քնած էր մնում և արթնանալով տեսնում էր, որ  
ամեն ինչ փոխվել է: Նա որոշ ժամանակ ապրեց  
որպես հովիվ, բայց այդ գրադմունքը նրան դուր  
չեկավ, և կրկին գնաց քնելու:









Երբ հսկան շատ տարիներ անց արթնացավ,  
դարձավ հարուստ ազարակատեր, բայց պար-  
զելով, որ ծառաները խաբում են իրեն, նա նորից  
գնաց քնելու:

Երբ հսկան ի վերջո երրորդ անգամ արթնացավ,  
գնաց գրոսնելու լեռան լանջին, որ տեսնի՝ ինչով  
կարող է գբաղվել:

Այսպես նա հասավ մի ջրավազանի, որտեղ մի  
ջրվեժ կար, որ թափվում էր ժայռերի վրա:









Այնտեղ նա մի խումբ աղջիկների տեսավ,  
ովքեր, ուրախ-ուրախ ծիծաղելով, ոտքերը  
թրջում էին ավազանում: Հսկան թաքնվեց ու  
դիտեց: Աղջիկներից ամենահամեստը ամենա-  
գեղեցիկն էր: Նրա անունը էլիզաբեթ էր: Մի  
քանի օրից նա պետք է ամուսնանար դքսի հետ:  
Էլիզաբեթն ընկերուհիների հետ խոսում էր  
սպասվող խնջույքի մասին, և հսկան այդ ողջ  
ընթացքում նայում էր նրանց: Երբ աղջիկները  
հեռացան, հսկան շատ տխրեց. նա սկսեց իրեն  
միայնակ զգալ:





Հսկան որոշեց, ինչ գնով ուզում է լինի, շահել  
էլիզաբեթի սիրտը: Ուստի նա ջրավազանի  
հատակը ծածկեց ձերմակ մարմարով, որպեսզի  
այն փայլի պարզ ջրի մեջ: Հետո հսկան ավազանը





եզերեց արծաթով, ավագանի մեջ ոսկե ձկներ  
լցրեց, ափերը պատեց դալար խոտով, անուշա-  
բույր մանուշակներով, անմոռուկներով և մուգ  
կապույտ հակինթներով: Այնուհետև նա թաքնվեց  
ու սպասեց աղջիկներին:





Երբ աղջիկները եկան և տեսան այս հրաշքը,  
շատ զարմացան, բայց էլիզաբեթը մտազբաղ  
էր թվում: Նա գիտեր, որ այստեղ հաստատ ինչ-  
որ հզոր կախարդանք կա: Մոտեցավ և ուշադիր  
նայեց արծաթափայլ ավազանի մեջ, որը լի էր  
ոսկե ձկնիկներով: Այդ պահին նա մի ձայն լսեց,  
որը շնչում էր՝ մոտ արի: Հետո ջրի ձողփյուն






լավեց: Էլիզաբեթի ընկերուհիները վախեցած  
նայեցին ջրավազանին. Էլիզաբեթն ընկել էր  
ջուրը: Նրանք վազեցին՝ օգնելու Էլիզաբեթին,  
բայց արդեն ուշ էր: Էլիզաբեթն անհետացել էր:  
Նրանք գննեցին ավազանի արծաթափայլ  
խորքերը, բայց Էլիզաբեթը չկար ու  
չկար: Աղջիկները տուն շտապեցին  
և ամեն ինչ պատմեցին երիտասարդ  
ղբսին: Դուքսն առանց ժամանակ





կորցնելու եկավ ջրավազանի մոտ: Հսկայի  
ստեղծած ողջ հրաշքն անհետացել էր. չկար  
մարմարը, չկար արծաթը, չկային ոսկե ձկները,  
չկար ոչ մի ծաղիկ: Մնացել էին միայն ավազանի  
սև քարերն ու ջուրը: Էլիզաբեթին չգտնելով՝  
դուքսը վշտացած վերադարձավ պալատ: Նրա  
աչքին էլ ոչինչ չէր երևում, նրան ոչինչ չէր  
ուրախացնում:













Այդ ընթացքում էլիզաբեթը հայտնվեց հսկայի պարտեզում: Նա աղաչեց էլիզաբեթին մնալ իր հետ և դառնալ իր թագուհին, բայց էլիզաբեթն ասաց, որ ինքը դքսին է սիրում և երբեք նրան չի դավաճանի: Հսկան հույս ուներ, որ էլիզաբեթը կմոռանա դքսին, բայց աղջիկը ժամանակի հետ ավելի էր կարոտում իր փեսացուին և կարոտից մաշվում ու գունատվում էր: Հսկան սկսեց մտածել, թե ինչպես ուրախացնի էլիզաբեթին: Հանկարծ հիշեց, որ ինքը մի կախարդական փայտիկ ունի, որը ինչի դիպչում է, մի ինչ-որ կենդանի է դարձնում: Նա փայտիկը տվեց էլիզաբեթին: Մի քանի ժամով էլիզաբեթի տրամադրությունը բարձրացավ, երբ մեկը մյուսի հետևից հայտնվեցին մի փիսիկ, շնիկ և դեղձանիկ: Բայց շուտով նա կրկին տխրեց:






Հսկան հրաշալի գազարներ էր աճեցնում և շատ էր հպարտանում դրանցով: Նա ընթրիքի համար հողից մի քանի գազար հանեց: Էլիզաբեթը շատ հավանեց գազարները: Նա ասաց, որ





դրանք կյանքում իր փորձած ամենահամեղ  
գազարներն էին:

Հաջորդ օրը հսկան էլիզաբեթին տարավ  
դաշտ, որտեղ աճում էին գազարները: Նա հար-  
ցրեց հսկային, թե քանի գազար կա այնտեղ,  
բայց հսկան չգիտեր: Էլիզաբեթը խնդրեց  
հսկային հաշվել գոնե մեկ շարքի գազարները:  
Հենց որ հսկան սկսեց հաշվել, էլիզաբեթը հանեց  
կախարդական փայտիկն ու գետնին ընկած մի  
սև քարի կպցրեց: Քարը դարձավ մեծ  
սմբակներով մի սև նժույգ, էլիզաբեթը նստեց  
նժույգն ու փախավ:









Նա վերադարձավ դքսի մոտ, և հենց մյուս օրը նրանք ամուսնացան ու երջանիկ ապրեցին մինչև խոր ծերություն: Իսկ միայնակ հսկան գնաց իր պարտեզն ու խոր քուն մտավ:

Հատ տարիներ անցան, բայց հսկան չարթնացավ: Ժամանակի ընթացքում քնած հսկայի վրա խոտ, բույսեր ու ծառեր աճեցին, բայց նա դեռ շարունակում էր քնած մնալ: Տարիների ընթացքում այն կանաչապատ բլուրը, որն առաջացել էր քնած հսկայի վրա, սկսեցին կոչել Հսկա սար և մինչև օրս էլ այդպես են կոչում: Ուստի զգուշացե՛ք, եթե հանկարծ գազարի դաշտերով պատված սար տեսնեք, շատ հնարավոր է, որ քնած հսկայի մոտ եք գտնվում:

